

ՏԱՍՆԵՐՈՐԿ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ.:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի նմանորոտան մէջ:

Օտարապաշտարացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Խմագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
իրարանկար քառիս 2 կոպեկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ւ Մ Է Կ Ե Ր Ո Ր Կ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրոպագանդայով:
ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետոն կամ Բանասիրական, VIII. Ցայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԿՈՒԹՅՈՒՆԸ, 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռ., իւրաքանչիւր ամսին 1 ռուբլ. Հատով համարները 5 կոպեկ:

Գրվել կարելի է խմագրութեան մէջ հետեւեալ հասցեով. Тифлисе, редакция «Мшак».

Խմագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Առանձին բաղդ ունենք.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Երանուցում, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Ֆրանսիա: Նամակ թիւրքայից: Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Մշակների գրութեան առիթով:

ԱՌԱՆՁԻՆ ԲԱՂՎ ՈՒՆԵՆՔ

Բաւական է որ „Մշակը“ մի բան յայտնի,—և ահա ամենքը սկսում են կատարաբար յարձակվել նրա յայտնած մտքի վրա, համարում են մեր յայտնած միտքը վնասակար, ազգամիտ, հրէշաւոր, անտեղի, անմիտ, ազիտութեան, անփորձութեան, անփոհեմութեան արգասիք, խմբագրական պաշտօնին մեր անպատաստ լինելուն, հայոց ազգային ոգուն, նրա պատմութեան չիմանալուն արդիւնք և այլն և այլն:

Եթէ շարունակենք բացատրել մեր միտքը, ծնվում է մի անվերջանալի բանակոխ, որ շատ անգամ հրէշաւոր կերպարանք է

ընդունում: Սկսում են յեղաշրջել լօգիկան, մոլորեցնել հասարակական կարծիքը, սօֆիզմ սօֆիզմի վրա թափել, հայհոյել, վիրաւորել և այլն:

Բայց անցնում է փոքր ինչ ժամանակ, կրքերը հանդարտվում են, յիշողութիւնը թուլանում է, մտում է միայն արդար մտքի, ճշմարիտ գաղափարի տպաւորութիւնը, որ հաստատվում է իրական փաստերով,—և ահա նոյն մարդիկ, որանք կատարաբար մարտնչում էին մեզ դէմ, անգիտակցաբար սկսում են կրկնել մեր մտքերը, առանց յիշելու թէ մեր մտքերն են կրկնում, հաւատացած լինելով որ նոր գիտեր են արել....

Հազար ու մի օրինակներ կարող ենք բերել մեր խօսքերը ապացուցանելու համար: Կը բերենք այստեղ մի քանի ապացոյցներ միայն:

Երբ մենք յարձակվում էինք Կ. Պոլսի հայերի վրա, թիւրքահայ մամուլը կատաղաբար մեզ դէմ էր գրում և պաշտպանում էր Կ. Պոլսի հայերին, անուանելով

մեր գրածները աննորիզի գրգռութիւններ, ներ: Այժմ Կ. Պոլսի հայ մամուլը ինքն սկսում է անխնայ կերպով քննադատել թիւրքահայոց, մանաւանդ պօլսեցիների պակասութիւնները:

Երբ մենք համարձակվեցանք այն միտքը յայտնել թէ կրօնը այլ բան է, ազգութիւնը այլ բան, թէ կրօնը համոզմունք է, թէ կուզ պատմական, ուրեմն ենթակայ է, որպէս ամեն համոզմունք փոփոխման, իսկ ազգութիւնը մի ֆիզիկական, կամ ալի լաւ է աւել մի ֆիզիոլոգիական, բնական երեւոյթ, որ ուզածի պէս փոխել չէ կարելի, քանի որ բնական է կապված է հողի և մայրենի լեզուի հետ, որոնցից առաջինը պատմական—ֆիզիկական հիմք է, իսկ երկրորդը պատմական—ֆիզիոլոգիական, երբ մենք համարձակվեցանք, աւսում ենք, այդ ճիշդ ճշմարտութիւնը արտայայտել,—էլ մարդ չը մնաց որ մեզ վրա չը յարձակվէր: Իսկ այժմ Զիւլեւիսիայի Պարչալոյս Արարատեան «լրագրի պէս մի ֆանատիկոս թերթն անգամ յանկարծ այն գիւտն է անում, թէ կրօնը և ազգութիւնը ջոկ բաներ են, թէ կրօնը համոզմունք է, իսկ ազգութիւնը բնական, անփոփոխելի երեւոյթ, թէ հայ-կաթօլիկները և Աղարեան եպիսկոպոսն էլ հայեր են, և այլն:

Երբ դեռ Կ. Պոլսի թատրոնական խումբը եկած չէր թիֆլիս, մենք յայտնեցինք այն միտքը, թէ այդ խումբը, որպէս Կ. Պոլսի բոլոր մնացած մտաւոր արտայայտութիւնները, անշուշտ բոմանտիկական, մեթօդաւոր և մեր հասարակութեանը և չէ կատարող կրթիչ ազդեցութիւն ունենալ մեզ վրա: Մենք գուշակում էինք որ Կ. Պոլսի դերասանները բոմանտիկական ուղղութեանը ընտելացած լինելով, իրանց հետ կը բերեն մեզ և այդ ուղղութեամբ ընդհանուր քանի որ ուրիշ ընդհանուր մէջ խաղալ

չեն կարող: Մենք այդ հաստատ փոխինք, որովհետեւ տարիների ընթացքին հետեւում էինք Կ. Պոլսի գրականութեանը, թատրոնին, մտաւոր կեանքին: Խումբն եկաւ, մեր մտքերը արգարացան, մենք շարունակեցինք նոյն մտքերը յայտնել և մեր թատրոնական ընդհանրանում: Բոլորը մեր դէմ էին, վրդովված էին մեր յայտնած մտքերով, զերում, յարձակվում էին մեզ վրա:

Ժամանակն անցաւ, մենք դադարեցինք թատրոնի վրա խօսել: Եւ ահա մեր հասարակութիւնը, մոռանալով թէ որտեղից են քաղում իրանց մտքերը, սկսում են այժմ իբր ինքնուրոյն կերպով մեր մտքերը կրկնել, միայն աւելի անշուշտ և աւելի անկապ կերպով:

Գա մեր առանձին բաղդն է: Մենք յայտնում ենք մտքեր, մեզ վրա անխնայ յարձակվում են,—իսկ մի տարուց, գուցէ մի քանի ամսից յետոյ սկսում են նոյն մտքերը յայտնել, իբր ինքնուրոյն, անկախ գաղափարներ, կարծես թէ նոր գիւտ են արել:

Մենք բերեցինք մի քանի օրինակներ. կարող էինք հազար և մի օրինակներ բերել: Կանցի փոքր ինչ ժամանակ և մեր յայտնած մտքեր փոքրը առ փոքր և հետզհետէ կընդունվեն, մանաւանդ երբ միտք յայտնողները իրանք այլ ևս կենդանի չեն լինի: Մենք այդ բանի մէջ համոզված ենք, որովհետեւ մեր յայտնած մտքերը մեզանից հնարած չեն, այլ ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան են պատկանում, իսկ մենք միմիայն նրանց թոյլ արտայայտչներն ենք:

Իսկ ընդհանուր մարդկային ճշմարտութիւնները, ինչքան էլ ժամանակաւոր թըշնամիներ ունենային, անպատճառ մի օր յաղթող կը հանդիսանան, որովհետեւ ճըշմարտութիւնը վերջ ի վերջոյ յաղթող է հանդիսանում նախանձի, կրքի, ազիտութեան և բթմամտութեան վրա:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄՇԱԿՆԵՐԻ ԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—Ինչ հաշիւ, ինչ բան, ես քեզ չեմ արձակի, դու պարտաւոր էիր ինձ մի ամիս առաջ յայտնել քո դուրս գալը, որ ես մարդ վարձէի քո փոխարէնը, դու գիտես, որ ինձ ինչ վնաս կարող է բերել քո դուրս գալը գործի տաք ժամանակը—լինում է գործարանատիրոջ առաջին պատասխանը մշակին: Գործարանատէրը գիտէ, որ մի հասարակ մշակի գործից հեռանալը իրան ոչինչ ներկական վնաս չէ կարող հասցնել, բայց նա այդ ատում է ուրիշ մտքով: Մշակը հասկանում է այդ միտքը և սկսում է խնդրել, աղաչել որ ինչպէս և իցէ վերջացնելով հաշիւը արձակի իրան: Գործարանատիրոջ սիրաւ փոքր ինչ կակողում է մշակի աղաչանքներից և տալիս է նրա վերջնական հաշիւը, բայց վնայ այն տալուն, որ նա է տալիս—Քեզ պատկանում է—ատում է նա մշակին—տարի ու կէս գործելուց համար այսքան գումար, սրանից ստացել ևս այսքան, ասաւ շուշայ ես փչելի, դրա համար դուրս եմ բերում այսքան, այդ ինչ ժամանակ չես գործել,

դուրս եմ բերում քո վարձից այդքան և վերջապէս մնում է այս, մտ, ստացիր ու կորիր շահանամը: Հազար գումար, հազար աղաչի ու արտասուք թափի մշակը, օվ է լսելու նրան: Շատ կերկարացնի շինքին մի քանի էլ կը տան ու ցեխի մէջ կը գործեն. ճարտաստեղ ատում է սուրս ևս գործարանատիրոջ վերջին մի քանի սև կուպկենները ու աչքերը արտասուքով հեռանում դէպի իր հայրենիքը:

Ան ինչպէս է նիւթապէս հարստահարվում ողորմելի մշակը անխիղճ, քարասիրտ թուրք և շատ հայ գործարանատէրերի ձեռքում, բայց զանք թէ ֆիզիքապէս ինչպէս է հարստահարվում նա:

Մշակի ֆիզիքապէս հարստահարվելու մասին կարծես թէ աւելորդ է այլ ևս խօսել վերև բերած մի քանի տեղեկութիւններից յետոյ օրուայ մէջ 18—19—21 ժամ գործելու վերաբերմամբ: Բայց ոչ, այդ դեռ փոքր է մշակի համար, նա գուցէ իրան բաղդաւոր համարէր, եթէ թողնէին օրուայ այդ երկար միջոցը հանդիսատ գործել: Մշակի թշուառ անձը բացի այդ դեռ ևս շատ և շատ հարուածներ է ստանում իր տիրոջից, հարուածներ, որոնց մտաբերելու ժամանակ մարդ կամայ ակամայ դայրանում է տենելով թէ տասն և իններորդ լուսաւորեալ սոված դարի վերջին կէսում դեռ մեռած, անհետացած չեն միջնադարեան ամենախիտ եղութեական ինկվի-

դիցիայի հետքերը, դեռ նոքա ապրում և տիրում են այստեղ, Անդրկովկասի այդ մի աննշան անկուսում մի բուռը անգութ, անխիղճ և ցած հարստահարիչների հսկողութեան ներքոյ, այն հարստահարիչների, որոնք համար, կարծես, ոչինչ սուրբ բան չը կայ, որնք ամենայն ընդհանրապէս են իրանց շահերին գոհել ամեն բան, գոհել նաև իրանց եղբայրակիցների ու արեւմակիցների սուրբ, բնական մարդկային իրաւունքներից սկսած մինչև նրանց կեանքը: Մի դայրանար այդ խօսքերի վրա, սիրելի ընթերցող, այն ինչ որ տեսնում և լսում է ամենայն օր ներկայ տողերը գրողը եթէ քեզ պատահէին տեսնել ու լսել, նոյնը կը կրկնէր և դու, գուցէ առաւել տաք կերպով: Սակայն մի քանի փաստերից դու կարող ես եզրակացնել թէ Բագուի գործարաններում բանող մշակների ֆիզիքական վիճակը որքան ողբալի է: Ես չեմ խօսի այդ մասին երկարօրէն, ես չեմ պատմի մանրամասնօրէն այն անխնայ թափի, ծեծի և փողոցային ամենազարչելի յիշողների մասին, որոնցով ամենայն օր վարձատրում է գործարանատէրը խեղճ մշակին, այլ կարճաւոք կերպով կը պատմեմ երկու նշանաւոր դէպքեր, որոնց նմանը հազուադիւրս չեն մշակները կեանքում և վերջ կը տամ իմ ներկայ յօդուածին: Այդ երկու դէպքերից մէկը պատմել է ինձ մի հայ գործարանատէր Աղ. Նաջարեան անունով, իսկ միւսը արդէն յայտնի է Բագուի

հասարակութեան, գուցէ տեղային լրագրիչների միջոցով և ուրիշ հասարակութիւններին էլ:

Ահա պ. Նաջարեանի պատմածը, թուրք գործարանատէրից մէկը վարձում է մի մշակ նոյն պէս թուրք, սովորաբար առանց գրաւոր պայմանագրութեան: Անցնում են մի քանի ամիսներ և մշակը, որ ամենայն օր թակի, ծեծի և յիշողների վերջապէս մի օր կամենում է թողնել վերջինին և վարձել մի ուրիշ գործարանատէրի մօտ: Թուրք գործարանատէրը չէ ուզում արձակել մշակին, իսկ վերջինը հաստատ մնալով իր կամքով, առանց սպասելու իր վարձին կամենում է հաւաքել իր շորերը ու դուրս գալ: Այդ ժամանակ գործարանատէրը հրամայում է իր միւս մշակներին կապել նրան մէկ սիւնի վրա ու ծեծել: Սկսվում է եզրուտակալան ինկվիզիցիան և մշակի մարմինը փայտի անխնայ հարուածների ոյժից զանազան տեղերից դուրս է հոսում արիւն: Գուռը ձայնի վրա վազում են հարեան գործարանատէրերը, որոնց թուում և պ. Նաջարեանը և ուշաթափ մշակին մերձ ի մահ խլում են գաղաւթաբար թուրք գործարանատէրի ձեռքից: Չորս ամիս անկողնում պառկելուց յետ հալւել հազ վերականգնում է նրա առողջութիւնը:

Վերկորդ դէպքը պատահում է Բալախանիում և ահա ինչպէս: Մի հայ Աղամեան ազգանունով հանքատէրի նաւթային հորի երկաթի լողովակը,

Եւ մեր կենդանութեան ժամանակ մեր հակառակորդները, ինչպէս շատ անգամ արդէն մեզ առիթ տուած են, դեռ շատ անգամ մեզ առիթ կը տան ժպտալ նրանց գրուածներէ մէջ կարգալով այնպիսի ճշմարտութիւններ յայտնելը, որոնց մի քանի ամիս առաջ նրանք երգուեալ թշնամիներ էին հանդիսանում:

Գեռ մեր գործունէութեան ասպարիզում շատ բառ առիթ կուենանք ասելու աւելի յարմար ժամանակին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒՑՈՒՄ

Թիֆլիսի արուեստագործներէ վարչութիւնը Рем. Уст. прод. 1863 թ. 0 Прод. Палатахъ, 140 յօդուածի հիման վրայ յայտնում է բոլոր վարպետներին, ոսկերչներին, արծաթագործներին, դազագիններին, ժամագործներին և վաճառականներին, որոնք պարտաւոր են Թիֆլիսում արծաթեայ և ոսկեայ արդիւնադործութեամբ, հրաւիրելով նրանց շտապել վեր առնել թոյլատուող վկայականներ արծաթեայ և ոսկեայ արդիւնքների պատրաստութեան և վաճառման համար մինչև յունվարի 1-ը 1882 թ-ին: Վարպետները և վաճառականները, որոնք չեն վեր առնել մինչև յունվար ամիս յիշեալ վկայականները, կենթարկվին կըրկնակի վճարման տուգանքին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք Վոլոդա Մորիանս լրագրի բաժանորդագին 8 բուրլ ար. կոպեկ: Նախկին 896 բուրլ 15 կոպեկ գումարի հետ կանի 904 բուրլ 15 կոպեկ:

Ոչ մի տարի «Մշակի» ստորագրութիւնը այդքան վաղ չէր սկսել և այդքան աշուղ չէր գնում, որքան այս տարի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖԻՐԱՆՍԻԱ

Գամբետայի բացատրութիւնները Տուենիսի գործերի վերաբերութեամբ հաւանութեամբ ընդունվեցան գրիթէ բոլոր լրագրիւններին:

որի լայնութիւնը (диаметръ) լինում է 16 դիւյմ, 6 սափն խորութիւնում, չը դիտեմ ինչպէս, ծրուած է, որ սովորական է բոլոր նոր քանդակող հորերի համար: Այդ ժամանակ հանրապետի կառավարիչ գործակատարը փոխանակ այդ դէպքի համար նշանակված գործիչի, մի պատանի թուրք մշակի ձեռք տալով թուրքի ծայրը, հրամայում է նրան իջնել խողովակի ներքև և ուղղել վերջինը: Պատանի մշակը համաձայնում է և թուրքի ծայրից բռնած իջնում է խողովակի միջով անդունդը. բայց այդ ժամանակը հորի մէջ գոյացած գազը խնդրում է մշակին և նա չնչապառ թուրքաւորով, բաց է թողնում թուրքի ծայրը ու զրոյում խողովակի ներքև: Գրուած լինողները տեսնելով որ թուրք թեթեւեղ, սկսում են կանչել դէպի ներս մտնող մշակին, բայց սա ոչինչ չէ պատասխանում և խելոյն հասկանում են, որ նա ուշաթափ է եղել: Հարպիկ գործակատարը մնում է շուտ-ժամ և չէ իմանում թէ ինչ անէ, բայց այդ ժամանակ մի ուրիշ մշակ 50 բուրլով համաձայնում է վայր իջնել հորի մէջ և դուրս բերել ուշաթափված պատանուն: Փորձում է նա վայր իջնել, բայց նրա մարմինը երկաթի խողովակի նեղութեան պատճառով ներս չէ գնում. դուրս են քաշում գնանից երկաթի խողովակը, հորը փոքր ինչ լայնանում է և երկրորդ մշակի մէջքից կապակով թուրքի ծայրը գլխի վայր բաց են թողնում 18 դիւյմ լայնութեան ծակի մէջ առանց

Մինիստրութիւնը ամրացրեց իր հեղինակութիւնը շտապելով կուսակցութիւնների մօտ: Մինչև անգամ գերմանական մամուլը հաւանեց Գամբետայի «Գլխավորական» ձեռք և գովեց Փրանսիական առաջին մինիստրի «պետական խելք»: Կառավարութեան յաղթութիւնը պատգամաւորների ժողովի մէջ շատ նշանաւոր է: 400 ձայներից գոյացած մեծամասնութիւնը մի յուսալի պաշտպանութիւն է, որ Գամբետայի կառավարութեանը երկար կեանք է խոստանում: Վերջին միջաբանութիւնների հետեւանքները պատգամաւորների ժողովի մէջ նորից ցոյց տուին թէ ինչպիսի հեղուկութեամբ և հաստատամտութեամբ Գամբետայի կարողանում է կառավարել պարլամենտը: Ֆրանսիական սենատի մէջ լինելու է աւելի հետաքրքիր ճարտասանական մըրցութիւն: Գուքս դը-Բրոյի և Ժիւ-Միմոն մտադիր են կառավարութեանը հարց առաջարկել արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ: Գուքս դը-Բրոյի կամենում է ապացուցել, որ Տուենիսի անցքերը վատացրին Ֆրանսիայի յարաբերութիւնները միւս պետութիւնների հետ և որ նոր մինիստրութեան քաղաքական նախագիծը այդ առարկայի վերաբերութեամբ չի ուղղի նախկին կառավարութեան սխալները: Գամբետայ օգուտ կը քաղէ այդ դէպքից և կը մեկնէ իր արտաքին քաղաքականութեան ուղղութիւնը ընդհանրապէս և մասամբ իր խաղաղասիրական նպատակները:

Պատգամաւորների ժողովի մէջ Տուենիսի հարցը քննվելուց յետոյ միւս օրը Գամբետայ տակարացաւ և ոչ ոքի չէր ընդունում: Այդ հիւանդութիւնը հասկանալի է պարլամենտական դժուար կուրից յետոյ Տուենիսի հարցի վերաբերութեամբ, որ մեծ նշանակութիւն ունէր մինիստրութեան համար: Կառավարութեան կողմից միայն Գամբետայ էր մասնակցում միջաբանութիւններին: Մնացած մինիստրները բոլոր ժամանակ լուռ էին և Գամբետայի քարտուղարների դեր էին կատարում: Առաջին մինիստրի անձնական հեղինակութիւնը հետզհետէ մեծանում է: Երկու նոր մինիստրներին նշանակելու հրամանը մի քանի անբաւականութիւնների առիթ տուեց: Պարլամենտական մասնաժողովը չէր կամենում հաստատել կառավարութեան պահանջած կրեդիտը, անկասկած համարելով երկու նոր մինիստրութիւնների հիմնելը առանց պատ-

մասնելու, որ հորի անպաշտպան պատերը կարող են քանդվել և կենդանի թաղել երկու ողորմելի մշակներին: Երկրորդ գլխավոր իջնող մըրցակը երկաթի կետը (железные) գցում է առաջին ուշաթափված մշակի մէջքից և այդպիսով դրում լինողները քաշում են երկուսին միասին հորից դուրս: Առաջին պատանի մշակը հազիւ հազ արտայայտում է կեանքի նշույններ, մի կերպ ուշքի են բերում նրան և նա ազատվում է մահից: Գեռ լաւ է, որ գտնվում է մի այնպիսի քաջապիրտ հերոս, որ յանձն է առնում գլխավոր նեղ անդունդը իջնել, բայց կթէ չը լինէր, խելք պատանին պիտի զոհ դառնար մի խելագար գործակատարի կամքին էլի:

Չարմանալին այն է, որ այդ գործակատարը շատ էլ յիմարներից չէ. նա Տաճկաստանի հոստո աղզաւորներից է. և անունն էլ Նազարէթ Առաւելդանց է, որ մի ժամանակ հայերէն մի բրոշուր էր հրատարակել, որի վերնագիրը, եթէ չեմ մոռացել, այդպէս էր. «Հայն բարբառու պիտեղույն առ ամենայն հայտ»: Երկի հէնց այդ անխղճութիւնը նրա ազգասիրութեան արգասիքն է եղել, և նա կամեցել է Հայաստանի քիւրդերի վրէժք Բագուում մի անպաշտպան պատանի մշակից հանել:—Տարօրինակ ազգայնութիւն, որի պատճառով նա այժմ, չնորձով ուսուսական արգարութեան, բարեբաղդաբար պիտի երկու ամիս մութ բանտում նստի:

գամաւորների ժողովի համաձայնութեան: Առևտրական մինիստրը մինչև այդ ժամանակ բնակարանն չունէր իր և իր մինիստրութեան վարչութեան համար: Գեղարուեստների մինիստրը, որի իշխանութեան տակ են պետական բոլոր շինութիւնները, իզուր էր աշխատում իր ընկերոջ համար բնակարան գտնել: Մի և նոյն ժամանակ ինքը գեղարուեստների մինիստրն էլ բնակարան չունէր: Երկուսի գրութիւնն էլ ծիծաղելի էր: Վերջապէս պարլամենտական մասնաժողովը համաձայնեց հաստատել պահանջած ծախսերը այն պայմանով, որ կառավարութիւնը պաշտպանու առանց պատգամաւորների ժողովի համաձայնութեան այդպիսի կարգաւորութիւններ չանէ, որոնց համար նոր ծախսեր են հարկաւոր:

Գեներալ Շանգի, որ ուղևորվել է Ս. Պետերբուրգ իր արձակման թղթերը առևայց կայսրին յանձնելու համար, ձանապարհ ընկնելուց առաջ խորհրդակցութիւն ունեցաւ հանրապետութեան նախագահ Գրեվիի հետ: Շանգի Փրանսիական 6-րդ գորտաժների գլխավոր հրամանատար կը նշանակվի: Պատերազմական այժմեան մինիստրը հրաժարվեց յանձնել իր նախորդ գեներալ Ֆարին մի գորտաժին հրամանատարութիւնը: «Nouvelle Revue» ամսագրի մէջ արդված է երեկի լեւեպի յօդուածը, որով նա հերքում է այն միտքը, իբր թէ արարների շարժումը ներքնված է կրօնական Ֆանատիկութեան, որ յատուկ է միայն թիւրքերին: Յօդուածի հեղինակը առաջ է բերում Ղօրանից դուրսն, որոնք վկայում են Մահմեդի բարեկամութիւնը քրիստոնեաների հետ: Լեւեպս առաջ է բերում հետեւեալ փաստը, որ, երբ Ֆրանսիան ձեռք բերեց Ալժիրին, նա հարկաւոր համարեց Տուենիսի բէյին իր դաշնակից դարձնել: 1830 թուականին Ալժիրին և Օրանը նուաճելուց յետոյ, երբ Փրանսիական կառավարութիւնը վճռեց գրաւել այդ երկիրները, Փրանսիական հրապատու Լեւեպս, Ֆերդինանդ Լեւեպսի հայրը, մի համաձայնութիւն կայացրեց Տուենիսի բէյի հետ, որի համեմատ բէյի կըրայրը և ժառանգը պէտք է տիրէր Կոստանտինոպոլիս և Ֆրանսիային հարկ վճարէր: Այդպիսով Կոստանտինոպոլիսի մի մասը պէտք է համարվէր, բայց Փրանսիական կառավարութիւնը չը վաւերացրեց այդ համաձայնութիւնը: Լեւեպս այն ժամանակ ծառայում էր իր

կարող էի առաջ բերել այդպիսի և սրանց նման սարսափելի անխղճութիւններ գործարանատէրերի և հանրապետների կողմից դէպի մշակ դատակարար, բայց սա այժմ թողնում եմ, ըստ որում յօդուածն շատ կերկարանար: Սակայն այդ մի քանի հատկոր տեղեկութիւններից կարծում եմ, որ ընթերցողը կարող է մի որոշ գաղափար կազմել Բագուի մշակ դասի դասն վիճակի մասին:

Յօդուածն կնքում եմ մի քանի խօսք ուղղելով դէպի գործարանատէրերը ու հանրատէրերը:

Գուքս, պատուելի պարոններ, ինչ էք մտածում արդեօք, որ այդպիսի անխղճութեամբ ձեռնչում էք խելք մշակին. միթէ կարծում էք, որ նա մարդ չէ, որ նա չէ զգում այդ բոլոր դառնութիւններն ու վշտերը. միթէ կարծում էք թէ նրա կեղտոտ ու պատաւոված ցնցոտիների տակ մտած են նրա սիրտը, հոգին և մարդկային ըզրացումները, թէ այդ ցնցոտիների տակ թագնված է ոչ թէ մարդ, այլ մի անշունչ առարկայ, մի անպէտք փայտի կտոր: *) Խղճացէք եթէ ոչ

*) Շատ ամոսում եմ, որ ներկայ յօդուածն զուրկ է ստատիստիքական տեղեկութիւններից, բայց ինչ անես, ոչ մի տեղ չը կարողացայ գրանել այդ տեղեկութիւնները: Կիսեցի Բագ. Օրդ. Սյե. Եւ. Օճի-Յա. անուանված ընկերութեան նախագահին, որը ամենայն տարի վիճակագրա-

հոր գրասենեակի մէջ, այնպէս որ նա 50 տարի շարունակ ծանօթ է Հիւսիսային Աֆրիկայի գործերի հետ:

Պատգամաւոր Անատոլ դը-Լեաֆօրժ յայտնեց ժողովրդական լուսաւորութեան մինիստր Պոլ Բերին, որ նա մտադիր է հարց առաջարկել մինիստրի եկեղեցական քաղաքականութեան վերաբերութեամբ, բայց Պոլ Բեր խնդրեց յետաձգել այդ հարցը մինչև յունվար, որովհետեւ մինչև այդ ժամանակ պատրաստ կը լինի մտադրված օրինադիժը եկեղեցու յարաբերութիւնների մասին դէպի պետութիւնը:

Արտաքին գործերի մինիստրութեան մէջ գեւականներին տուած ճաշի ժամանակ Գամբետայ ծանօթացրեց պապական նուիրակ Չապլուն մինիստր Պոլ Բերիի հետ: Այդ ծանօթութեանը ամենքը հետաքրքրութեամբ վերաբերվեցան: Մոնսիոնոր Չապլին ճաշի ժամանակ նստած էր այն սեղան, ուր սովորաբար նստում է տան արկիւրը: Նրա մօտ նստած էին իշխան Հոհենլոօ և կոմս Բէյա, իսկ Գամբետայի մօտ ուսուսաց դեսպան իշխան Օրլոյ և անգլիական դեսպան Լորդ Լայօնս: Լրագրիւնը հարգողում են, որ գեւականները շատ գոհ մնացին Գամբետայի սիրովի ընդունելութիւնից և նրա երեւելի խոհարար Տրոմպետի արհեստից:

ՆԱՄՍԿ ԹԻՐՔԻԱՍՏՑ

Կ. Պոլիս, 25 նոյեմբերի 81

Ազգ. ժողովը վաղը պիտի գումարի. ժողովուրդը շփոթած է, չը դիտեր թէ ինչ պիտի ընէ: Գիւաններու շարաթ աւուր գումարման մասին ընդարձակ տեղեկութիւններ չը տարածվեցան: Ազգ. խմբագրութիւնը ապուշի դեր կը կատարէ. դիտէ որ պատրիարքը Գրան persona grata չէ, ինքն ալ խոհեմութիւն ընելու համար կը լաւ: Եթէ այսպիսի պարագայ մը մէջ մամուլը կը լաւ, երբ պիտի խօսի: Ազգ. ժողովը մէջ դեր կատարողները լուրի կը գործեն և հաւանական է որ վաղուան նստին ներկայ չը գտնուին: Շատ խտտութիւն կայ որ ժողովրդական յուզում տեղի չունենայ. ժողովը թէպէտ դռնբաց պիտի ըլլայ, բայց—150—հոգւոյ մնակ տոմսակ տրուած է մուտքի համար:—Բարդուղիմէոս եպիսկոպոսի անունը կը վերափոխուի, բայց առանց համարձակելու յայտնի ըսելու: Բարդուղիմէոս եպիսկոպոսը կարճահասակ ձեռնասուն վարդապետ մը ունի, Ստեփան վարդապետ, որ ամիս ու կէս հոս թափանցաւ, պէտք եղած տեղերը գնաց, լրագրաց խմբագրութիւնները այցելեց, փորձիչ շարունակ ի ձեռքին:

Ի սէր Աստուծոյ, որին դուք երեկ մոռացել էք, եթէ ոչ ի սէր մարդկութեան, որից դուք նոյնպէս գուրկ էք, դէթ ի սէր ձեր սեփական շահերի: Այո, ձեր սեփական շահերը պահանջում են ինչպէս մշակին, այն մշակին, որի ձեռքերով դուք այսօր ձոն հարստութիւններ էք դիզել, որի քրտինքով դուք այսօր փառաւոր պալատներում էք ապրում, որի աշխատանքով դուք այսօր հասարակ զինու տեղ շամպոնիւմ էք խմում: Նստած ձեր բարձր պատգամներում զարմացնելով միամիտներին: Բարեպետէք ձեր մշակների սնտոսական դրութիւնը և այդ ձեր օգուտն է, որովհետեւ որքան որ դուք սիրէք, խընայէք մշակին, նոյնքան նա ևս կը սիրէ, կը խնայէ ձեր գործերը: Իսկ թէ ինչպէս էք պարտաւոր բարեպետ մշակները դրութիւնը, թեթեւացնել նրա աշխատանքները—այդ ես կը բացատրեմ ձեզ մի ուրիշ յօդուածով:

Բագու. Շիրվանզադէ

կան տեղեկութիւններ է հաւաքում, նա նոյնպէս չը կարողացաւ ինձ բաւականացնել, որովհետեւ գործարանատէրերը և հանրատէրերը օրինաւոր տեղեկութիւններ չեն տալիս նրան. բայց եկող տարիանից նա մտադիր է ամեն միջոց գործ դնել հաւաքելու տեղեկութիւնները. ես ևս կօգտվեմ այնուհետև:

Գուցէ այս ալ բաւական մը ազդեցութիւն ունեցած ըլլայ Ներսէսի հրատարականքին վրայ անոնց կէս—անտարբերութեանը: Թերթերը եթէ լաւ ալ չը գրեն, անպատաս ալ չը պիտի գրեն: Բարդուղիմէոսի վրայ— ինչպէս նախորդով ալ ըսինք, զնա առ այժմ անզգայան ընել կուզեն: Բայց այս նենգութիւնները պիտի յաջողին, շատ տարակուսական: Մերովը եպիսկոպոսի անունն ալ կը հնչուի, կը պատուար առաջնորդը: Բարդուղիմէոսի խնդրոյն մէջ ձեր շնորհունակ Մանկունիին մասը կը նշմարուի: Կ. Պօլսի ճանապարհորդած ժամանակն նախնական պատրաստութիւնները տեսած է: Մուրաբանն եպիսկոպոսի մասին մեծ նոր դժուարութիւն մը կը ծագի, օսմանեան հպատակ չէ ծնած, ուրեմն չը կրնար պատրիարք ըլլալ կառարկուի: Իզմիրլեանի վրայ ալ կառավարութիւնը կասկածելի աչօք կը նայի կրեան: Այս առաւօտ լուր մը կը տարածուի, կառավարութիւնը ազգային իշխանութեան յայտած է եղել թէ երբ հարկ ըլլայ Ներսէսի յաջող մը ընտրել, առջինին պէս չըլլայ: Ազգ. ժողովը երեք եպիսկոպոս պիտի ներկայացնէ Բ. Կրան և Բ. Գուռը անոնց մէջ մին պիտի ընտրէ: Այս լրոյն տուածութիւնը չենք երաշխաւորել: Այսօր պատրիարքի հրատարականք կառավարութիւնը ներկայացուցիչ է Սուլթանին, և նախարարաց ժողովն ալ սկսած է լուրջ նկատողութեան առնուլ: Լրագիրները հազարեցեցին թէ պատրիարքի զանգատանոց մին բաւանալու որոշում տուեր է Բ. Կուռը, ամենէն անմեղ գանգաւոր: Զիւանդանոցի հացն ու միսը զոր կառավարութիւնը դադարեցուցեր էր, վերստին պիտի տայ: Միւս խնդիրները ծանրակշիռ են և հայկական հարցի հետ սերտ յարաբերութիւն ունին: Այս օրերս նորէն հայկական հարցի վրայ սկսեալ են խօսել, բայց ոչինչ որոշական: Լեվանտ և սեղուտս եւրօպական ուրիշ թերթեր յուսալիք են, և կը հասկնան թէ կառավարութիւնը 61-րդ յօդուածի առթիւ վերստին միջամտութեան պիտի ձեռնարկեն: Պատրիարքը յայտնի թիւրք թերթերը, որ նախարարաց կարծիքը կը ցոյցանեն, անհոգ են: Կրանն թէ կառավարութիւնը Անատոլի բարեկարգութեանց անհրաժեշտ պէտքը կը զգայ և պիտի ձեռնարկէ զործարդել: Պատրաստած է, կըսեն, ընդարձակ ծրագիր մը, որ ամեն տեսակէտով պիտի զոհանայ թիւրքի ժողովուրդները: Կատարելով ծրագիրը, մը կըսեն, որ գործ զենել պիտի սկսուի, երբ, դասալիկայ մարտն, ինչու մարտն, որովհետեւ տաճկաց գանձային դարեցուցիչ է: Եւ զիտէք ուսկից պիտի սկսուի, անմիջապէս Կ. Պօլսոյ մերձակայններէ, իզմիրլէն և կամաց կամաց պիտի տարածուի մինչև Պատրիարքի մը տարուան մէջ այնպիսի արդիւնքներ առաջ պիտի գայ եղբր այս ծրագրի գործարարութիւնն, որ կատարելապէս պիտի պսակէ ամեն յոյսեր: Ասկէց յայտնի կը տեսնուի թրքաց խորհրդի ընթացքը: պատրաստել ծրագրի բարեկարգութեանց, որով եւրօպացիները կարող չըլլան առարկութիւններ ընել, ատոր գործարարութիւնը որչափ կարելի է ուշացնել և եթէ յանկարծ գործարարութիւն մը ըլլայ, որ եթէ մինչև կարգը Հայաստանի գայ բանը բանէն անցած ըլլայ:—Նշուել ինչքան ինչ պատրիարք, ինչ որ կը տեսնենք, ինչ որ կը լուսնենք, ամեն կերպով կազմեցանքն թէ զիւսանադիտութեան զո՞նք ենք, և այս ալ միշտ այսպէս պիտի ըլլայ, քանի որ մենք այս խնդր վիճակին մէջ ենք և հոս ալ մեր տունը մեր ձեռքովը փոխելու համար ինչ որ կարելի է ընել պակաս մը չենք ձգել:—Սճմէզ Մուսիթար բաշա իբր քովսէր Հայաստան խրկուելու լուրը վերստին հազարեցեցին հոս տեղի եւրօպական լրագրերը, թիւրք թերթերը փութեցին շուտ մը հերքել այս լուրը:

Թիւրք կառավարութիւնը եթէ արդարեւ կը փափակի բարեկարգութիւններ ներմուծել, պարզ միջոց մը ունի առ այժմ. օրէքըները ճշտիւ և անապատութեամբ առաջարկել տայ: Վարդուց է որ չենք հազարդեր ձեզ մի առ մի հարստահարութեանց համար հոս տպուած տեղեկութիւնները: Եթէ զոքս տուտ են, ինչո՞ն հերքում չը կայ, եթէ ճիշտ են, էր մեղապարտ չեն պատժուիր: Ինչ օգուտ այս հարցում, պատասխանը հին պատմութիւն: Եթէ կուսակցութիւնը Վիլիկիայէն կը հրատարակէ մի նամակ ուսկից քաղաքացի մը աւելորդ չենք տեսնել: Առանձին շուկային մէջ երկու տաճիկ իրարու հետ կուսի կը բռնուին, լուրի սափոր կը նետեն իրարու, սափորը քան տարեկան հայ տղու մը զլուսն կուզայ, տղան կը մեռնի:— Թղթակիցը չըսեր թէ քնն ըրին սպանիչներուն, փոքր պատիժ մը տուին, Քեսապցի փոխարէն պահանջեցին, ոչինչ: Տարածուի Լամբրոն ամարանոցի մէջ Շէյխ Անի տաճիկ մը քանի մը տաճկաց հետ հայու մը տուն կը կոխէ զիւրը, զեղեցիկ հայ պատանի մը առեանգելու կամ հոն բռնաբարելու փորձեր կընեն. գոռում գոչում, դրացիք կը հասնեն. ոճրագործք չեն կրնար իրենց կիրքը յազգեցնել: Կառավարութեան բողոք չըլլայ: Կուսակալին կը բողոքեն, կը հրամայէ գործը քննել. գայմագամը կողմակալութիւն կընէ տաճկաց. հայք նորէն կը բողոքեն արդարութեան առեանգ, տաճիկը ձերբախլալ ված է: Թղթակիցը կը յաւելու. չը յուսաց ուրի որ օճրագործք ըստ օրինի պատժուի:— Կը յուսաց ուրի, աղւուր է, այնպէս չէ:—

Այլ առակ լուսարուք:— Հաճումէ ժամանակ Ընդգեան (կառավարիչ) ձեռով անցած ժամանակ Ընդգեան Սարգիս հայ մը բարի կը կայնի, ձին այս յարգանքէն կը խրատի, գայմագամը ձեռն խրչալը չախորժեք, անմիջապէս վար կիջնէ, բռնել կուտայ հայը և աղւուր մը խարաղանաւ ձեռն կուտայ հայը. այն տատիճան ձեռն կուտայ որ աղուն ձեռքը գրեթէ կը կոտրի:— Հայ առաջնորդը կը բողոքէ. գայմագամը պաշտպանութիւն կը վայելէ:— Տեսնենք այս դատին վերջը:— Ինչքէ մարդիկ, որ կը ինչորդ թիւրք հայաստանները պատժուելու վրայ է, կը կարծեն որ կարելի ըլլայ մահմտական մը պատժել կհա մուրի մը համար. կերակր թէ այս խնդր թղթակիցը Տէլի Մեհմէդի զիպուածը մոռցեր է: Ռուսիոյ գեապանատան պաշտօնեայ մը սպանեցին հոս Կ. Պօլս, և մարդասպանը ազատ է: Տեղական լրիստութիւնը այսպէս անտարբեր հանդիսատես է հայոց դէմ եղած ոճրագործութեանց, և տխուրացած ու ծախուած թիւրք մտաւոր կը լուսն այս ամենուն վրայ և անզգայ դար յարձակումներ կընէ մեր վրայ:— Իսկ երբ հայ մէ մեղապարտ կարծուածը, իշխանութիւնը շուտ մը կը ինչ թէ արդարութիւնը Ղուրանի պատուէրներուն մէջ կը գտնուի:— Օրինակ մը: Եթէ լրագիրները հազարեցեցին թէ Բ. Կուռը պատրիարքարանէն խնդրեք է որ Պաշտպալի (Վանայ վիճակին մէջ) վանահայր և առաջնորդ Յովհաննէս վարդապետը կարգալուծ ընելով յանձնեն Բ. Կրան, որպէս զի պատժուի իբր մարդասպան:— Բ. Կրան առաջ Յովհաննէս վարդապետը ախպիսի մեղապարտ մ'է, զոր պէտք է անպատճառ պատժել, վասն զի այս անձը զէջ օրինակ տուած է, ինքնապաշտպանութիւն: Եթէ այս մարդը չը պատժուի, ինչ քննակար հետեւութիւնք, ամեն հայ պիտի կարծենայ ազատութիւնը պաշտպանել առանց 61-րդ յօդուածի գործարարութեան սպասելու:— Անցեալ տարի ամառը Յովհաննէս վարդապետ մի քանի հայոց հետ Վանայ զիւղերը այցելութեան կը պատրի սովորէ համար. ձմեռան քիւրդերու խումբի մը կը հանդիպի, որոյ կառավարիչ թրքացած հայ մը. քիւրդերը կրակ կընեն հայոց վրայ, հայք անդէն և բացի Յովհաննէս վարդապետէն, որ աղէկ քաղց է. Յովհաննէս վարդապետ քիւրդերուն կը պատասխանէ իրենց լեզուով, կը պարպէ հրացանը և գետին կը բռնէ թրքացած հայը. քիւրդերը ահաբեկ կը փախնեն: Կառավարութիւնը երբ կիմանայ գործը, կը ձերբակալէ վարդապետը, սակայն ինքնապաշտպանութեան խնդիրը ակներև էր, անմիջապէս պատժելն յանդիմութիւն էր. ուրեմն կարճ կեն զնա իբր անպարտ:— Քանի մը ամիս վերջ գիւշեր մը աղմուկ կը տիրէ Վանայ մէջ. ամենքը ոտք կըկեն. Յովհաննէս վարդապետ, չղթայապալ վան կը բերեն զինուորները. յուզումը մեծ կըլլայ. զիւրերնց առաջնորդարանը կը զիմէ ժողովուրդը: Առաջնորդը և երիտասարդ մը կը գիմեն հիւպատոսաց, պ. կամտարական և պ. Բէյլի կը միջամտեն, կառավարութիւնը կը պարտաւորի վերստին վարդապետը ազատ թողուլ: Այս կողմութիւնը աններելի էր թրքաց աչաց առջև. ինչ որ ալ ըլլար, անորդեքի պետական հարկը, la raison d'Etat, կը պահանջէ, որ թրքասպան հայը, մահաւանդ կղերական, պատժուի, ուստի հիմա զնա կը պահանջեն պատրիարքարանէն: Եթէ պատրիարքարան զիմարդէ, իրեն համար նոր ամբաստանութիւններ պիտի ըլլան կառավարութեան կողմէ. եթէ յանձնէ, ուրեմն ինչ բանի պիտի ծառայէ իր իրաւասութիւնը, երբ արդար և անմեղ եկեղեցական մը պաշտպանելու

անկարող է:—Մեր թերթերը իբր լուր մը կը հազարեցնեն այս դէպքը. ժողովուրդի մէջ քանի հոգի կը ինչ թէ քնն է այս Յովհաննէս վարդապետի խնդիրը, որ ազգին համար կենսական խնդիր մ'է. ինչպէս պատմութիւնէն կը տեսնուի: Խնդիրը հայոց ինքնապաշտպանութեան իրաւունք տեսնելու կամ չտեսնելու վրայ է:— Այս խնդրին մէջն ալ կը լուսն մեր թերթերը, երբ այնքան պարագայ խնդրոց համար իրենց սրտակները կը լեցուցին: Այս վարկեանին աչքին առջև ունեն Վասիսի) երեկուան թերթը, որ երեք սրտ լեցուած է Երուսաղէմի վանուց խնդրոյն համար: Այդ երեք սրտներուն մէջ պ. Բիւզանդ, Վասիսի) գեապալիթի օգնականը կը ջանայ ցոյց տալ որ Վշակ) մեծապէս կը սխալի երբ օգտակար չը համարեր Երուսաղէմայ պարտոց համար հանգանակութիւն ընելն: Այդ յօդուածը ներքինալ է: Հետաքրքրութեան համար մէկ հատուած մէջ ըրենք. Վշակ) ապահով ենք որ հայկական մեր թիւրքիցի պաշտօնակցին անպատժեան, հայ ազգին համարէն, թէ ի Թիւրքիա և թէ ի Ռուսիա, պիտի զգայ թէ այսպիսի կարևոր հաստատութիւն մը, որ զգալի պարագայից բերմամբ ծանր պարտոց ներքն ինկած է, համարութեան և նիւթական օգնութեան արժանի է, քանի որ ոչ մէկ հայ կողմէ այդպիսի վանքի մը անուշտ վայելուց չէ, ամբողջ հայ ազգը կայ, թէպէտ Վշակ) արդարեւ տարբերակ է. Երուսաղէմի վանքին կրօնական, քաղաքական և ազգային կարևորութիւնը հայ ազգը նոր պիտի զգայ:

Իսկ եթէ բացի Վշակ)—էն ամբողջ հայ ազգը ընդունած է Երուսաղէմի կարևորութիւնը, ինչ ըսու ազգը: Երեմիա եպիսկոպոսը, որ երկու տարի առաջ Ռուսիա հանգանակութեան գնաց որպէս զրամ հաւաքեց, և Ս. Էջմիածինը ինչ օգնութիւն ըրաւ, Երեմիա եպիսկոպոս շատ գանգատներ յայտնած է. Էջմիածինը որ վանքի պաշտպան չըլլար, սով պիտի ըլլայ: Իսկ Կ. Պօլս ինչ եղաւ: Ազգային թերթերը իրենց պարագլուսն ունենալով Վասիսի) ինչ ազգեցութիւն ըրին ժողովուրդի վրայ, ինչ արդիւնք ունեցան:— Պատրիարքը չը քաղաքականներ խորհրդէ, յանձնաժողով կարգակցաւ. Կ. Պօլսոյ ամենին հարուստ և ամենին աւելի բարեպաշտ անձնէք, սակայն զեռ Վասիսի) մէջ տող մը բան չը կարգադրեք թէ քանի գահեկան ժողովուրդաւ: Սոքո ու դրամական վիճակը պէտք չէ որ պատրուակ բռնուի, զի այնքան ընկերութիւնք կառուցանք քիչ թէ շատ ստակ հաւաքել. իսկ Երուսաղէմայ պարտոց յանձնաժողովը և ոչ իսկ փոքր ընկերութեան մը չափ կրցաւ հաւաքել: Այն աստիճան եղաւ ազգին ստանութիւնը Երուսաղէմայ պարտոց մասին, որ նայն իսկ Վասիսի) մէջ կարգադրեք, եթէ չեմ սխալեր, որ անկարելի ըլլալով որ ազգը վճարէ այդ պարտքը. Երուսաղէմայ կառավարները, որ կը պատու են վաճառելու հարկը տեսնուել է:—Ուրեմն Վշակ) ուրիշ բան չէ ըրեր իր մի քանի տողերովը, բայց եթէ ճիշդ ազգին կարծեաց թարգման ըլլաւ:—Եթէ ինչողութիւնս տեղի է Արեւելեան Մասուլ ալ կառուածները վաճառելով պարտքերը վճարելու գաղափարը յայտնած էր երկու տարի առաջ:—Եւ իրաւացի եթէ 300.000 թուրքի հաւաքել այս միջոցին կարելի ըլլար. Երուսաղէմէն դուրս ուրիշ շատ անմիջական պէտքեր ունենք հողաւոր:—Շղթայակիրն օրերը դժուար կը վերադառնան: Իսկ պէտք է աւելցնել որ մեր պատուական սուրբ հայրերը վատանութիւն չնշուելու վիճակ մը ունենալէ հետի են:

տաքանի օգնութեամբ: Իսկ Բոչֆօր, իր կողմից, պատրաստուած է եւանջով պաշտպանակել, ինչպէս երևում է նրա հրատարակած վկաների ցուցակից, որի վրա կան հետեւեալ նշանաւոր անձանց անունները. Կոմս Լէյստ, բարոն Բիլլինգ, Կոմս Սանտի, Օսկար Կէ դը-Տիւրի, Ֆորսի, Լէօն Բընօ, գեներալ Սօսիէ, դը-Կուտուլի և այլն: Բայց արդեօք այդ բոլոր վկաները Բոչֆօրի հրատարակած դատարան կը գան թէ ոչ,—այդ զեռ ևս հարց է մնում:

—Այն ստանութեան պատճառով որ տիրել է իշխան Բիւստարի և կենտրոնի, կաթօղիկ կուսակցութեան մէջ, նախկին յոյսերը պարամենտում պահպանողական մեծամասնութիւն կազմելու մասին, բոլորովին չուր դարձան: Կանցիլերի օրգանները յարձակվելով կենտրոնի առաջնորդ Վինգօրստի վրայ, մեղադրում են նրան կարճատեսութեան, մանրակրկա ու միակողմանի լինելու և ազգաբնակիչներ չունենալու մէջ:

—Առարկական լրագիրներին հազարում են հարաւային Կալմաքայից, որ չէրնօգորկական քահանայ Պէրօ Մատանովիչ, կրկնուէ գնաց, Կովալէփի նման ապստամբների զորաբանի առաջնորդութիւնը ընդունելու համար: Չէրնօգորկան անատու, Յետինէու, այս օրերս քննվում էր Չէրնօգորսի գործելու եղանակը կրկնուէ պատահած անկարգութիւնների վերաբերութեամբ: Նիստը, ինչպէս ստուծ են, շատ փոթորակից էր:

—Լճեղոնից գրում են «Порядокъ» լրագրին, որ երբ կը գումարվի անգլիական պարլամենտը Լորդ Կրէնվիլ և Չարլս Կիլի կը ներկայացնեն երկու ժողովներին բացի զօկուսնաներից, որոնք վերաբերում են եղիպտական հարցին, նոյնպէս ամբողջ զիւլուծմաստական գրողութիւնը Հայաստանի վերաբերութեամբ, որի գոռութեամբ մանաւանդ շատ էր պարագլի վերջին ժամանակներս Լորդ Կրէնվիլին, Կ. Պօլսի անգլիական դեսպանը: Եւ առաջարկում էր և միւս պետութիւնների ներկայացուցիչներին պահանջել Թիւրքիայից Հայաստանին վերաբերեալ Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածը անյազող իրագործելու, բայց որքան յայտնի է, այդ պահանջները մնում են դեռ ևս ճայն բարբառոյ յանապատի:

—Բերլինից հեռագրում են որ իշխան Բիւստարի և կղերական կուսակցութեան մէջ ստանութիւն է ընկել: Կառավարական կուսակցութիւնը վրդովված է, որ Վինգօրստ և կղերական կուսակցութիւնը քուէարկեցին անտեսական խորհրդի պրեսիտի դէմ պրօքրսիտների հետ միասին: Կառավարական օրգանները աղղէ սկսում են յարձակվել Վինգօրստի դէմ, որին զեռ երկէ համարում էին Բիւստարի և կառավարութեան բարեկամ: Իշխան Բիւստարի տանը եղած վերջին պարամենտական ճաշի ժամանակ կենտրոնի, պիւրիքս կղերական կուսակցութեան ներկայացուցիչներից, ոչ ոք չէ եղել:

—Եթէնքից հեռագրում են, որ Յունաստանում մեծ վրդովուած կայ յունաց կառավարութեան և յատկապէս թագաւորի դէմ: Ընտրութիւնները ազգային ժողովի համար շատ աղմկայի և մինչև անգամ միկալի կը լինեն: Ընդդիմադրական կուսակցութիւնը յայտնում է որ պատրաստ է պաշտպանել ազգի ազատութիւնները զէնքը ձեռն անգամ:

—Լրագիրները հազարում են, որ գերմանական Բայստագի սէսիան կը փակվի նոյնքերի 19-ին, կամ 20-ին:

—«Русский Еврей» շարժամթերթը հազարում է որ Կամբլտտայի նոր միլիտարութեան մէջ երեք միլիտարներ՝ Բէնալ, Կիլար և Պօլ Բէր, հրէաներ են:

—Հռօմում շատ դժգոհ են Բիւստարի նորերում ասած խօսքերից, թէ իտալիայում միապետական սկզբունքը հետզհետ ընկնում է: Լրագիրները քննում են գերմանական կանցլէրի այդ նշանաւոր խօսքերը:

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 զեկտեմբերի: «Пра-вит. Вѣстн.» լրագիրը հազարում է, գեներալ Չերեխին վրա լեզուով արձակելու պատճառները բացատրական են և այդ պատճառով Բիւստարի մեջնակին Սանկովսկու և Ս. Պետերբուրգի մեջնակին Մեխիկովի գործը յանձնված է գլխուորական դատարանին: Հաստատված է մուհրակաթղթի գնի բարձրացնելը: Սպասում են ժառանգութեան վրա հարկի հաստատելուն:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական լրագիրները հազարում են, որ ներքին գործերի միջնորդ, Վալդէկ-Րուսօ, միջոցներ ձեռք արաւ Ֆրանսիայից արտաքսված կղերական միաբանութիւնների անդամների վերադարձը արգելելու համար:

—Լրագիրները հազարում են, որ շուտով կը լինի մի հետաքրքիր և քաղաքական բնաւորութիւն ունեցող պրօցէս ֆարիզում: Ֆրանսիական դեսպան Տունիուս, Բուստան, դատի է կանչել Բոչֆօրին, մեղադրելով նրան բամբասանքի և զրպարտութեան մէջ: Բուստան ինքն կը տանի իր գործը դատարանում, Կէլեր փա-

